

Մ Ե Ղ Ո Ի

7*

Հ Ա Ն Դ Է Ս

12

ՏԱՐԻ

ՄԱՐՏ

Թ. 192

Շ Ա Ր Ա Թ Ա Կ Ա Ն

1863

Ինչ որ խմբագրութեան և Տնօրէնութեան կը վերաբերի պէտք է ուզել առ ՅՈՎԱՆՆԵՍ ԶՈՎԻՆՅԱՅ, Ղալաթիս, փոքոց Եռականքար, Թիւ 55: — Այլճար նամակ կամ ծրար կը վերժուի:

Օրագիրը ամեն շաբթու երեքշաբթի օրերը կը հրատարակի:

Գին տարեկան 420 դուռուշ արծաթ. — Վեցամսեայ 70. — Եռամսեայ 40. մեկ Թիւը 4 դուռուշ. դուրս խըկուած Օրագրոց ձամբու ծախքը ընդունողին վրայ է: — Ծանուցման տողը 4 դուռուշ:

ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹԻՒՆԻՔ ԿԸՆԴՈՒՆՎԻՆ

Գ. 901ԻՍ Օրագրոյս գրասենեակը, Մեծ-Նոր-Խանի վերի դուռը Թիւ 2:

ՋՄԻՌՈՒՆՍ Տեարց Աւետիքեան եղբարց փաճառատունը և ԵՍՂԻԿ Հանդէսին գրասենեակը: — ՏՐԱՊԻՉՈՆ Խաչատուր ազախանեանի գրասենեակը:

Օ միւռնից ազգօգուտ և ազատախօս Օրագրոյս մէջ հետևեալ յօդուածը կարդալով արժան կը համարենք զայն ամբողջապէս օրինակել:

ՄԵՂՈՒՆ ԽԱՐԱՆԵԼ ՏԱԼՈՒ ՁԱՆՔ

Si je vous parle fortement, ne vous en étonnez pas, c'est que la vérité est libre et forte.

FÉNÉLON. Lettre à Louis XIV.

Տեսակ մը կայր Հայեր ստակաւին չհասկցան թէ ինչ որ իշխանք անդամ ընելու կարող չեն, իրենց՝ զայն ընել երազելը գրեթէ յիմարութիւն է: Խնդիրը թու՛մք մը զնելու վրայ է հեղեղ մ' առջև, մամուլին օրուն գորութիւնը անդիմադրելի է և աննուաճելի, մամուլին որ խաւարատներուն, երկիւղիմներու և աստիճանաւոր անձանց արարածները սեպուող ազգատեացներու յաւիտենական խրատելիակը եղած է և պիտի ըլլայ միշտ տասնևիններորդ դարու մէջ:

Յիտուն տարիէ 'ի վեր Հայր մամուլին բարիքը կը վայելէ և տասը տարիէ 'ի վեր է որ անհիկա սովորեցաւ կանայ և ահաւայ՝ ոչ միայն գովուելու; այլ նաև յանդիմանուելու հրատարակութեանց մէջ: Տասը տարիէ 'ի վեր է որ Հայր շատ ազատ թերթերու բերանը կարկեց խփել կարծելով արդարութեան մշտաբարբառ բերանը; և ասոր հակառակ արդարութիւնը իւր ձայնը աւելի բարձրացնելու և աւելի խրատութեամբ խօսելու առիթ և արածութիւն ունեցաւ: Տասը տարիէ 'ի վեր ազատ հանդէսներ, Երեւելի սխեմով մինչև Արևմտին, խափանուեցան կամ դադարեցան զիշերասեր Հայերու անձնակամութեամբը, այլ իրաւանց ձայնը և ազատութեան փողը աւելի զօրան որ և

աւելի խիստ կերպով լսելի եղան Հայ ահանջներու Երևուածքէն, Հիւսիսէն և Երևելքէն: Տասը տարիէ 'ի վեր պարբերական թերթերը մարդկային մտքի յանդուգն արտադրութեանց պատուանդան եղան, և շամիտք ահա բեկեղով կարծեցին կարենայ այս պաշտօնը խաւարանց ձեռքէն: Անայն ջանք: Ինչ կը հետևի այս ճշմարտութենէ. — Սա միայն, թէ օրագիր մը երբ ճշմարտութեան արձագանք կրկայ, հասարակաց կարծեաց թարգման կը համարուի, և թէ բռնաւորք երբ թերթ մը խափանելու տղայամուտ իւնը կրնն, հասարակաց կարծիքը արտայայտող անթիւ գործիներուն մին վերցուցած կրկան: Այլ որ կը կարծէ այս գործիներուն ամենն ալ փշրել և հասարակաց կարծիքը ջնջել, թող աշխատի՝ ուրեմն բառնալու անոր միւս անթիւ գործիներն ալ, իմացականութեան այն զինաշարժերը որոնք Եկեքսանդրներու, Կարդէններու բանակները աւազի պէս կաւլեն ու կանհետեն, և գորս այնպիսին կերակայէ յողթահարել փառուն զէնքով մը, այն զէնքով որուն զիւաշունչ զինուորը պատմութեան յաւիտենական նախատիք բերած է...

Եհա մայրաքաղաքին մէջ հրատարակուած Գաղղիական ազատ լրագրին այն յօդուածը որ Մեղու խափանման կը յարաբերի:

«Ար հաստատեն մեզ, — և գործը անհաւատալի կերևայ, — թէ Եզրային ժողովը Մեղու օրագրին խափանումը խնդրել է Բ. Դըսնէն: Մեղու յանդանքը մի միայն ճշմարտութիւնը բաժն ըլլալն է: Հայոց Եզրային ժողովը արեւօք չազիտեր որ օրագիր մը երեք անգամ ազգարարութիւն չննդուեամ՝ ասոր խափանումը ոչ զիւր բռնաւորական գործք մը ուզել է: Եթէ այսպիսի խնդիր մ' եղած է, ամենէն խոհեմ ձամբան զայն ետ աւնուլն է: Ե»

կարևոր նիւթի վրայ պիտի խօսինք եթէ տեղի տրուի և պիտի ըսենք ինչ որ է ճշմարտութիւնը : Եթէ գայթակղութեան տեղի տուած ըլլանք, յանցանքը մերը չպիտի ըլլայ, այլ անոնց որք զմեզ խօսելու գրգռած պիտի ըլլան :

Թե՛ և անձանօթ է մեզ Մե՛ն մասնաւոր հակառակորդը, յայտնի է թէ ասիկա, ո՛վ կուզէ թող ըլլայ, վրէժխնդրութեամբ կուզէ շեջուցանել այն ճրագներէն մին, որոնց ամբողջութիւնը ընկերային աշխարհին ջախն է, ըստ ազգու գրիչ մը : Խաւարին բարեկամները եթէ կը կարծեն թէ փոքրիկ ճրագի մը շեջումով ամբողջ ընկերական մարմին մը մուծին մեջ խախտելու պիտի սկսի, կը սխալին յոյժ :

Ի՞նչ է արդեօք Մե՛ն յանցանքը. — Ընշուշտ ճշմարտութիւն մը ըստծ ըլլալն է ինչպէս կը գրէ Կառլ Կրիստիան Եթէ չենք սխալիր, Մե՛ն յանցաւորութիւնը իւր 186րդ թուոյն մէջ Պաշտօնական Կրօնագրով հրատարակած յօդուածն է : Ընշ կը պարունակէ կամ ստորեւ եղելութեան մը պատմութիւնը և կամ զրպարտութեանց շարք մը : Ընշն ենթադրութեան մէջ Մե՛ն հետ ամեն հասարակաց բարեկամները սքազան պարտաւորութիւն մ'ունին հասկնելու համար ամեն աստիճանի աշխարհահանաց թէ ամեննին իրաւունք չունին վերաբարձրներու կարծիքները բռնաբարելու : Աւրիչ է հերքել, ուրիչ է բռնաբարել : Թող զարմանայ ուրեմն Մե՛ն հակառակորդը ճշմարտութեան խստութեանը ենթակայ ըլլալուն համար :

« Մի զարմանաք ձեզի հետ խստութեամբ խօսելուս, կը գրէր Ֆէնելոն Լուի չորեքրօս ասներորդին, վասն զի ճշմարտութիւնը ազատ է և խիստ » :

Եթէ երեւի աշխարհակալ մը կը զեջանի անմուռն սովորիլ ճշմարտութեան խստութեանը, Եղգային ժողովի անդամ մը ի՞նչ իրաւունքով պիտի կրնայ սրբողիլ և վրէժ առնուլ այս խստութենէն :

Եւ ի՞նչ կրնայ ըլլայ այսպիսի ընթացքի մը նպատակը. միթէ ասով միտքը, գրիչը, թուղթը, մերանը և մամուլը պիտի սպառնան : միթէ այն կերպով հարի՛ն է հանրութեան կարծեաց մէջ չդատապարտուիլ : Եթէ հնար է այս, եթէ մուծը սիրողները այսպիսի կարծիք մ'ունին, թող ուրեմն երևն կզպելու նաև Կառլ Կրիստիանը, թող աշխատին Եւրոպայի լրագիրներուն ալ խօսք հասկնելու և լռութիւն հրամայելու : Եթէ չունին այս գորութիւնը, հաւաստի ըլլան ուրեմն թէ թերթ մը խափանելով ընդհանուր մամուլը լռելու դատապարտուած չլլար և թէ ասոր ձայնը քաշել տարու ջանադիր մը կը նմանի այն միտքին որ կերէ խուփ մը շինել կուզէ հրաշունչ լեռան մը բերանը գոցելու և հրային հեղեղներու առաջը առնելու և ընթացքը արգիլելու համար : Եթէ բնութեան դէմ է այս, բնութեան դէմ է նաև մամուլը կաշկանդելը :

Երկրորդ ենթադրութեան մէջ մեզի հետ ամեն ճշմարտութեան սիրահարները թշնամի են Մե՛ն : Ելեր ուրեմն. գիտէ օրինաց իշխանութեան, հաստատէ իրաւունքը և երեք անգամ ազգարարութենէ ետքը օրինաւորապէս դադարեցնել տուր օրագիրը : Հրատարակութիւն մը խափանելու գիւրազոյն և օրինաւոր միջոցն է հրաւիրել անոր շարագիրը յատեան արդարութեան և անաչառութեան և հոն ենթարկել գանկիկա ՚ի դատապարտութիւն՝ յանցաւորութիւնը ապացուցանելէ ետքը : Հակառակ կերպով շարժիլ, մամուլութեան ապաւինիլ, մուծին մէջ խըտիլ և հոն գէնք պատրաստել, յօդուածին միտքը տարբեր կերպով ընդունիլ, գիտութեամբ կամ յանգէտ առարկութեց մէջ յանցական գիտաւորութիւն մը նշմարել ուղել, հեղինակին կարծիքները քաշքշել և մեկնել ըստ հաճոյնց, համոզել կառավարութիւնը որ արգելու թերթին հրատարակութիւնը կամ գէթ չթողու ազգային յօդուածներ հրատարակել, այս՝ ուղղամտութիւն և արդարասիրութիւն է և սե սիրտ մ'ունեցողներու միայն ներկիւն է :

Մեր նպատակը Մե՛ն յօդուածը կուրօրէն պաշտպանել է, եղելութիւնը անյայտ է մեզ, բայց եթէ մեր ազգին վերջին տարիներուս մէջ ունեցած մտական յառաջգիւժումութիւնը մամուլի արգիւնքն է. եթէ անունը ժառանգաւ բաւարաններու մէջ վնասուող չայլուուն հիմա Եւրոպայի առջև իբր ազգ մը ձանջուած ըլլալը մամուլին շնորհքն է, եթէ մեր ազգին հոնդոնին վրայ ապապայ մը աւետող աստղի մը երևալը մամուլին երակախքն է, եթէ մեր միտքը, սիրտը և հոգին կազմելու պաշտօնը մամուլին յանձնուած է, ապա ուրեմն մամուլը ինչպէս ամեն ազգերու, նոյնպէս մեր ազգին ալ բարեբարն է, և եթէ է, ուրեմն ուր որ մամուլը թշնամի մը կայ որ ինքնակամութեամբ և ապերախտութեամբ կուզէ ճնշել գայն, հոն ինչպէս ամեն երակախեցող նոյնպէս մենք ևս պատրաստ ենք ներկայիլ դրօշ ՚ի ձեռնին և կռուիլ, ուր կայ ճշմարտութիւնը անարդող մը, հոն կը խոյանանք անոր վրայ յարձակելու և արդարութիւնը պաշտպանելու համար ըստ կարի, ուր կայ իրաւանց բռնաբարիչ մը, հոն օրէնքը մեզ զինակից և աջակից առնելով պատրաստ ենք և պիտի ըլլանք միշտ. — քանի որ խօսելու համար լեզու և ապրելու համար օդը չպիտի պակասի մեզ-ցուցնելու այնպիսիին թէ մարդուս խօսելու ազատութեան իրաւունքը անբռնաբարելի է, և թէ մարդկային ընկերութեանց մէջ, թագաւորներէ սկսելով մինչև մուրացող աղքատը, չկայ մէկը որ հարկադրուած չլլայ ընդունելու «իմացականութեան սուխններուն» հարուածները. թէ ազատասէր թերթի մը առաջին և անհրաժեշտ պարտքն է կամ արիաբար զինիլ անիրաւութեան դէմ ըստ օրինի՝ առանց երբէք վախնալու վարձուած սոսկականներու ծաղրելի սպառնալիքներէն, կամ լաւագոյն համարի

հրատարակու ելէ դարբիլ քան թէ վատութեամբ
ահարէի՝ յանձնառու ըլլալ ընդու և անտար-
բեր հանդիսական մնալու ազգային ազեալից տե-
սարանը

Միայն մեր օրագրին խափանուելուն համար
Ազգային Արչունքեան առ Բարձրագոյն Դու-
ռը տուած խնդրագրին պատճառը Պրո-
ֆ. յօդուածն ըլլալը լաւ գուշակեր է։ Պէտք
է որ Միջին և անոր հետ ամեն ճշմարտասէր
անձինք գիտնան, որ Միջին ստոյգ եղելութեան
մը պատմութիւնն էր ըրած և ոչ զբարտու-
թեանց շարք մը. պէտք է գիտնան որ այն եղե-
լութեան ստուգութիւնը Ազգային Ժողովոյ մէջ,
և մեր առաջը Ամենապատիւ Տեղապահ Սրբա-
զանն անգամ խոստովանեցաւ, և յայտնեց որ իր
աչացք առջև տեղի էր ունեցած այն անցքը։

Ուրեմն ինչո՞ւ Ազգային Ժողովը կառավա-
րութենէն խնդրեց որ Միջին խափանուի. — ա-
սոր պատասխանը ընթերցողք կրնան մակարե-
րել դիւրաւ։ Ատենապետ Բարուեակ Պէյը Ժո-
ղովին մէջ մեզի յայտնեց որ Ժողովը այս գոր-
ծին միջամուկ ըլլալու բնաւ իրաւունք մը չու-
նի, ուստի չը գիտեմք թէ ինչպէ՞ս այս յայտա-
րարութենէ ետեւ կրցաւ Ժողովը իրաւունք ու-
նենալ Միջին համար բողբելու և անոր խա-
փանու մը խնդրելու

Բարձրագոյն Դրան Պատրիարքարանի կողմէ
տրուած Բարձրագոյն օրինակը մեր աչացք ներքեւ է,
ասոր թարգմանութիւնը եթէ հարկ ըլլայ հա-
տարակութեան պիտի հաղորդենք որպէս զի
կարգայ ու իմանայ թէ մեր Ազգային Ժողովոյ
մէջ ինչ ճարտար ու յաջողակ գրիչներու աե-
րեր կան, որք կրնան իրենց գրածներնուն մէջ
մէկ ծայրէ միւս ծայրը ստուգութիւններով ու զբը-
պարտութիւններով լեցնել։

ՄԵՐ ԱՆՈՅՄՆ ՈՒ ՄԵՂՈՒՆ

Եսկէ մէկ քանի շաբաթ առաջ մայրաքա-
ղաքին մէջ հրատարակուած Քրոնիկէ «Օր-
ագիրը» մեր օրագրին խափանմանը համար ազ-
գային Արչունքեան կողմէ Բարձրագոյն Դը-
ռան խնդրագիր մը տրուած ըլլալը ծանուցած
ատեն, Արչունքեան այս ընթացքին չէր հաւ-
ներ ու կերպով մը զայն պախարակեր էր։

Օմիւսնից Միջին Միջին լրագիրը իր
փերջին մարտ 9ի թերթին մէջ Քրոնիկէ յօդ-
ուածը թարգմանելով դնելէ ետքը՝ մէկ քանի
գիտողութիւններ ու խորհրդածութիւններ
կրնէ։ Չը գիտենք թէ այն խորհրդածութիւն-
ները Միջին լրագրին ներքին հասցիւն արգիւն-
քըն են, թէ արտաքին ազդեցութեանց պատ-
ղը, բայց սա գիտենք միայն որ ով որ անոնք

կարգալու ըլլայ, ինչոյն պիտի դուշակէ որ Ե-
րուան Մեղուն ընթացքը պախարակեր ու ազգա-
յին Արչունքեան կողմը բռնեի է, կարելի է
այն մտածելով որ «իրաւունքը միշտ հզօրագու-
նինն է» .

Երուան յօդուածէն ան կը հասկցուի որ
պէտք չէ ազգին մէջի գեշութիւնները երևան
հանել ու անոնց համար դարման պահանջել,
պէտք չէ կրօնականի մը կամ ազգին գործերուն
խառնուողի մը անվայել ընթացքը անիրա-
ւու թիւնները յիշել և անոր պատժուիլը խնդ-
րել, պէտք չէ Թագական Խորհուրդի մը, ե-
կեղեցականի մը, ազգային մատակարարի մը խար-
դախութիւնները ու գողութիւնները հասարա-
կութեան խնայքնել ու հաշիւ պահանջել։ Ին-
չո՞ւ, — վասն զի, կ'ըսէ «նախատինք կը բե-
րեն անոնք ընդհանուր ազգին», վասն զի « . . .
փաստներն առաւել կը ծանրանան, երբ որ հը-
րասպարակական թերթի մը մէջ կը պատմուին» .

Ար ներէ մեզ Երուան լրագիրը, կը ներեն մեզ
նաեւ ամեն անոնք որք Երուան պէս կը խոր-
հին. մեր կարծիքը բոլորովին տարբեր է. մենք
կը կարծենք և այնպէս կը հաւատանք որ ազգին
մէջի եղած գեշութիւնները պէտք չէ որ ծած-
կուին, պէտք չէ որ անյայտ մնան Ժողովրդեան
վայ բռնացողներն ու անիրաւութիւն բանեցը-
նողները, պէտք չէ որ խաւարին մէջ մնան ազ-
գային մտաւորներուն գլուխ անցնող պարօննե-
րուն գողութիւններն ու հաշուոց խարդախու-
թիւնները։ Օարմանալի բան չէ՞ որ մենք ամենքս
պ մեծէ մինչև պղտիկ ամեն օր նստած երած տե-
ղերնիս ազգին թշուառութիւնները կը խոստո-
վանինք ու չենք ուղեր որ օրագիրները դանոնք
հրատարակեն. դարմանալի բան չէ որ Սահ-
մանադրութեան հաստատուիլը կ'ուզենք, ազ-
գային գործոց մէջ բարեկարգութիւն մտցընել
կ'ուզենք ու չենք ուղեր որ օրագիրներն ա-
զատ ըլլան, անաչառ ըլլան և իրենց գիտցած
ու իմացած գեշութիւնները մեզի պատմեն, ու
րոնցմով մի միայն կարելի է բարեկարգութիւն
մը ձեռք ձգել։

Երուան կը կարծէ որ գեշութեանց հրա-
տարակութիւնները ազգին նախատինք կը բերեն,
չէ՞. «հրատարակութիւնը ազգի մը ունեցած
թիղձն է» և գեշութիւն մը յայտնուելէն ազ-
գը ո՞չ թէ կը նախատուի այլ ան գեշութեանց
առաջը անուղը կը խորհի. «Ազգին անհասին
» ո՞վ պիտի ճանչընէ իր իրաւունքը, կ'ընէ

« Ժիւլ Միմն, ո՞վ պիտի անոր պարտաւորու-
 « թիւնները գիտցնէ, ո՞վ պիտի հսկէ ժողո-
 « ղովորեան մը արդար իրաւանց հաստատ մը-
 « նալուն, ո՞վ պիտի Արչուութեան մը անվոյ-
 « թութեանն ու զլացումէն աւաջ գայլք գէ-
 « շութեանց դէմ ժողովուրդ մը կամ անհատ
 « մը պիտի պաշտպանէ:— Արգրութիւնը և այն
 « միայն: Աւանց հրատարակութեան՝ Ար-
 « շութեան մէջ ազէիութիւն մը եթէ տեսնը-
 « ՚ի անհիպ բացառութիւն մը համարելու է,
 « վասն զի աւանց անոր գրեթէ անկարելի է որ
 « ըլլայ»: Մենք ալ ահա այս կարծիքէն ենք
 « ու անոր համար է որ չենք կրնար լուել երբ կը
 « տեսնենք որ պղտերնիս էլ մը հարստահարիչնե-
 « ռու ու գողերու ձեռք է՝ անցած, երբ կը տեսնենք
 « որ պղտային Արչութիւնը որ նոյն հարբատա-
 « հարութիւնները ու գողութիւնները անհետ
 « ընելու համար է հաստատուած, զանոնք կը
 « տեսնէ, կ'իմանայ ու շատ անգամ անվոյթ կը
 « կենայ: Բայց մեր ընթացքը ախորժելի չէ դու-
 « ղէ դաս մը անձանց համար որոնք կ'ուզեն որ ի-
 « իրենց կամացը համեմատ դործելէ դադարելու
 « չ'ստիպուին, ասի մեր հոգը չէ. մենք հասա-
 « թսիութեան իրաւունքը պաշտպանելը մեզի պար-
 « տաւորութիւն կը ճանչնանք, և այս պարտա-
 « վորութիւնը չի կատարել ու աղբամբաս մեծե-
 « ռու առջև խնկարկելը մեր սահմանէն դուրս է:
 « Ասիկայ պէտք է որ Արշալույս ու մեր օրագրին
 « թշնամիները լաւ ըմբռնեն մտքերնուն մէջ:

ՄՈՒՐԱՏ

Գ.

ԲԻՉԶՕ

(Տես թիւ 192)

Քառորդ ժամէ մը ետև՝ բանտին դուռը
 բացուեցաւ ու Մաթթէի հրամանատարը
 ներս մտաւ: Մուրատ թիւերը խաչաձեւած՝
 կիսամերկ ոտքի վերայ կեցեր էր երեսը տիզմով
 ու արեամբ թաթախեալ: Մաթթէի ծուե-
 ցաւ ու խոնարհութիւն մը ըրաւ:

— Հրամանատար, ըսաւ Մուրատ իր զին-
 ուորական աստիճանը համադրեստէն ձանչնալով,

նայէ՛ սա չորս կողմէ ու ըսէ՛ որ ասանկ բանտի
 մը մէջ կը դնեն թագաւոր մը:

Այս խօսքերուն վրայ տարօրինակ բան մը
 պատահեցաւ. բանտին մէջ գտնուող յանցաւոր-
 ները՝ որ Մուրատը իրենց պէս չարագործ ու
 ստորին աստիճանի մէկը համարելով ներս մը-
 տած ատենը հայհոյեր ու վրան խնդացեր էին,
 թագաւոր ըրալը խնամայնուն պէս ամենքն ալ
 աւաջը խոնարհեցան ու անձայն բանտին խորը
 քաշուեցան:

Մաթթէի հրամանատարը թողութիւն
 խնդրեց ու Մուրատն հրաւիրեց որ գայ իրեն
 համար պատրաստած սենեակը բնակի: Մու-
 րատ դռնէն դուրս չ'երած ձեռքը գրպանը խօ-
 թեց, ասի մը ոսկի դուրս հանեց ու անձրևէ
 պէս բանտին մէջ տեղը նետեց:

— Առէ՛ք, ըսաւ բանտարկելոյ դռնալով,
 պէտք չէ որ զուրցուի որ թագաւոր մը հոս ե-
 կեր ու աւատածուեցութիւն մը չէ ըբեր:

— Աեցցէ՛ Յովակիմ, պուտային բանտար-
 կեալը ու ոսկիներուն վրայ ինկան:

Մուրատ դռնապէս ծիծաղեցաւ: Այս
 բառերը եթէ փոխանակ բանտի մը մէջ արտա-
 սանուելու, ժամ մը աւաջ հասարակաց հրա-
 պարակին մէջ արտասանուելու ըլլար, Մու-
 րատ այն միջոցին կրկին Նաբօթի թագաւոր
 էր եղեր: Ինչ կարևոր արդիւնքները երբեմն
 անանկ ոչինչ պատճառներով աւաջ կուգան որ
 կարծես թէ Աստուած ու աստանան իրարու
 հետ նարտ կը խաղան, ու անով կ'որոշուի
 մարդկանց կեանքն ու մահը և թագաւորու-
 թեանց հաստատութիւնը ու կործանումը:

Մուրատ Մաթթէի հրամանատարին հետ
 դուրս ելաւ, ասիկայ զինքը դռնապանին սեն-
 եակը տարաւ որն որ Մուրատին համար պատ-
 րաստել էր տուեր:

Հրամանատարը դուրս կելէր կոր երբ Մու-
 րատ զինքը կանչելով՝

— Պարոն հրամանատար, ըսաւ, կ'ուզեմ
 որ մէկ քանի դերձակներ բերել տաս:

— Հոս յաջողակ դերձակներ չեն գտնուիր:

— Թող Մծնթէլէօնէ երթան բնուէն ու
 դուստնին հոս բերեն շուտով:

Հրամանատարը խոնարհեցաւ ու դուրս ե-
 լաւ:

Նոյն օրը ժամը երկուքին Նուրնիանթէ
 գօրսպետը երեք հազար հոգով Սէն-Թուօ-
 բէայէն եկեր էր, Մուրատին սենեակէն ներս

մտաւ ու սկսաւ իրրև դատաւոր ամեն բան հարցաքննել : Մուրատ փոխանակ անոր հարց մանցը պատասխանելու հարցուց թէ կրնայ իրեն հագուստ մը ձարել : Օրապետը բարևեց ու դուրս ելաւ : Տար փայրկեանէն ամբողջ համադրեստ մը բերին : Մուրատ հագաւ ու սեղանի մը առջև նստելով Ռիձձոյի մէջ բան տարկուած ըլլալուն վրայ կնիանը և Վարօլիի մէջ գտնուող Մնգղեց դեսպանին ու Աւստրիական զօրաց հրամանատարին նամակներ գրեց : Յետոյ ոտքի ելաւ ու գնաց պատուհանը բանալով ծովեզերքը դիտել :

Արկու մարդ աւազին մէջ փոս մը կը փորելին , Մուրատ աչուրները անկեր անոնց ըրածին կը նայեր : Երբոր աս մարդերը փորելը լմնցուցին , տունէ մը ներս մտան ու դիակ մը թևերնուն մէջ աւազ դուրս հանեցին : Մուրատ տեսածին պէս իսկոյն ճանչցաւ որ մէկ քանի ժամ առաջ իր քովը իյնող Քամբանա անուն թիկնապահին դիակն է այն : Այս տեսարանը սաստկապէս վշտացուց Մուրատին սիրար , աչուրներէն սկսաւ արցունք հոսել իր երեսներուն վրայ : Այս միջոցիս Մուրատին թէ զօրապետը ներս գալով ու Մուրատին լայր տեսնելով զարմացեր մնացեր էր : Մուրատ ետին դարձաւ ու այն բաղնիքէն զինուորականին զարմանքը տեսնելով , — Այո՛ զօրապետ ըսաւ անոր , այո՛ կուլամ կոր , կուլամ կոր այն քսան և չորս տարեկան տղուն վրայ , որ իր ընտանիքն ինձի՛ էր յանձնած և որուն մահունը ես եղայ պատճառ : կուլամ կոր անոր ընդարձակ , հարուստ ու փառաւոր սպառաշին համար՝ որ անձանօթ փոսի մը մէջ և թշնամի երկրի մը վրայ մարեցաւ զնաց : Ո՛վ Քամբանա , Քամբանա , եթէ երբէք դահուս վրայ ելնելու ըլլամ , քեզի արքայական շիրիմ մը պիտի շինել տամ . . . :

Օրապետը քովի սենեակը կերակուր պատրաստել տուած ըլլալով , հրաւիրեց Մուրատը որ հետը գայ ու ձաշէ : Մուրատ գնաց սեղանին քով նստաւ , բայց չի կրցաւ ուտել : Վայրկեան մը առաջ իրեն երեւցած տեսարանը սիրաբոլորովին խորտակեր էր , և սակայն այս այն մարդն էր որ Ապուրիի , Այլօյի և Մօսքուայի պատերազմի դաշտերուն մէջ ինկած բիւրաւոր դիակները տեսեր ու անցեր էր աւանց հոգ ընելու :

Կերակուրէ ետև Մուրատ իր սենեակը

գարձաւ , գրած նամակները զօրապետին յանձնեց ու աղաչեց որ մինայ՛ ձգէ զինքը : Օրապետը դուրս ելաւ ու Մուրատ քիչ մ'ալ աւտեն խորին ու տխուր մտածմանց մէջ ընկղմելէ յետոյ , չի հանուած ու սրտաբեկ անկողին վերայ երկնցաւ :

Ամսուն Թին առաւօտուն՝ Մուրատին թէ զօրապետը սենեակէն ներս մտաւ և յայտնեց որ հեռագրական նամակներով հրաման էր ստացեր որ Վարօլիի թագաւորը իրրև հասարակաց թշնամի զինուորական յանձնաժողովի մը դատել տայ : Ահաւասիկ այն հրամանը :

ՆԱԲՕԼԻ 9 ՀՈԿՏԵՄԲԵՐ 1815

« Ֆրոնտանտօ , շորհօքն Աստուծոյ և այլն . վճռեցինք և կը վճռենք հետևեալը :

ՅՕԴ. Ա. Մուրատ զօրապետը պիտի ածուի , զինուորական յանձնաժողովի մը առջև որուն անդամները մեր պատերազմի պաշտօնեան պիտի անուանէ :

ՅՕԴ. Բ. Դատապարտեալին մի միայն կէս ժամ պիտի տրուի կրօնական օգնութիւններն ընդունելու համար » :

ՖԷՌՏԻՆԱՆՏՕ

Պատերազմի պաշտօնեան ալ զինուորական յանձնաժողովին անդամ էր անուանելու հետևեալ անձինքը :

Ճիւզեբբէ Ծաքուլօ , զօրապետի փոխանորդ՝ Նախագահ :

Լաֆաշլօ Սքալֆառօ , Բալապուայի զօրաց դուրսին հրամանատար :

Լաթէռէօ Նաթալի , ծովային զնդապետի տեղակալ :

Ճէննառօ Լանձէթթա , զնդապետի տեղակալ Վ. Թ. Թէթանօթաձիզ զօրաց հարիւրապետ : Փռանսօա տը Վէնժէ : Նոյնպէս :

Փռանչէսքօ Մաթէլլառի , տեղակալ :

Փռանչէսքօ Փռօիօ , տեղակալ :

Ճիօլաննի տէլլա Բամէռա ,

եւ Փռանչէսքօ Բաբալասսի , ստենադպիր :

Յանձնաժողովը դիշերը ժողովեցաւ : Հոկտեմբերի 13ին առաւօտուն ժամը վեցին , ըմբռաթթի հարիւրապետը արքային բանտը մտաւ . ասիկայ տակաւին արթնցած չըլլալով երբ ըմբռաթթին դարձաւ որ դուրս ելլէ՝ ոտքին ու դրանը ձայնէն արքան արթնցաւ :

— Ի՞նչ կուզես հարիւրապետ , հարցուց Մուրատ :

Սթրաթի խօսիլ ուղեց, բայց չի կրցաւ .
— Ա՛հ, ա՛հ, ըսաւ Մուրատ, կերևայ որ
Նաբօլէն լուր մը առած էք . . .

— Այո՛ տէ՛ր, մուռաց Սթրաթի .

— Տեսնենք թէ ի՛նչ են .

— Ձեր դատուիր Տէ՛ր .

— Գիտեմ այդ . բայց վճիռը ո՛վ պիտի տայ
չքսե՛ս . ո՛ւր պիտի գտնեն ատենակալներ ինձի
դատելու համար, եթէ զիս արքայ կը ճանչնան՝
պէտք է որ արքայից ժողովով մը դատուիմ . եւ
թէ իբրև Գահդիոյ մարաշախտ մը կը ճանչնան
զիս՝ մարաշախտներու ատենան մը կազմելու է,
և եթէ զիս զօրապետ միայն կը ճանչնան՝ զօ-
րապետաց ժողով մը պէտք է գումարուի .

Տէ՛ր, դուք հասարակաց թշնամի ծանուց-
ված էք, անոր համար զինուորական յանձնա-
ժողով մը պիտի դատե՛ ձեզ . այս օրէնքը նոյն
խկ դուք հաստատեցիք ապստամբաց դէմ .

— Բայց այդ օրէնքը աւագակաց համար
դրուեցաւ և ոչ թագադիր գլուխներու, ըսաւ
Մուրատ արհամարհանօք : Ես պատրաստ եմ,
թող զիս սպաննեն . չէի կարծեր որ Փէրախան-
ուն ատանկ գործ մը ընելու կարող էր .

— Տէ՛ր, կուզէ՞ք ձեր դատաւորաց անուն-
ները գիտնալ .

— Անտարակոյս պարոն, ատիկայ խիստ հե-
տաքրքրական ըլլալու է . կարգանայիմ .

Սթրաթի հարիւրապետը մեր յիշած ա-
նունները կարդաց . Մուրատ արհամարհական
ծիծաղով մը այն անունները մտիկ ըրաւ .

— Ա՛հ, շարունակեց երբոր հարիւրապետը
լմնցուց . կերևայ որ ամեն զգուշութիւններ
ձեռք առնուած են .

— Ինչպէ՛ս, Տէր .

— Այո՛, չի գիտե՛ս որ այդ կարդացած մար-
դերու գ ամենքն ալ Փռանչէնքօ Փռօիօյէն գատ՝
ինձմէ են առած իրենց աստիճանները . անոնք
այս պատճառաւ ինձի կողմնակցութիւն ընելէ
պիտի վախնան ու պիտի տեսնես որ բաց ՚ի մէկ
հոգի է ամենքն ալ վճիռը մի և նոյն կերպով պի-
տի տան .

— Տէ՛ր, եթէ յանձնաժողովոյ ներկայանա-
լու ըլլաք ու ձեր դատը դուք պաշտպանէք,
կարծեմ գէշ չըլլաք .

— Լռէ՛ պարոն, լռէ՛, ըսաւ Մուրատ : Ես
իմ դատաւորներս ճանչնալու համար, պէտք է
է որ պատմութեան շատ մը թղթերը պատուեմ
ու նետեմ . այդպիսի ատենան մը անկարող է ին-

ճի համար վճիռ տալու և ինձի ալ ամօթ է որ
անոր առջև ներկայանամ . գիտեմ որ չի պիտի
կրնամ իմ կեանքս ազատել, գոնէ թող ինձ որ
արքայական պատիւս տեղը պահեմ .

Այս միջոցիս Փռանչիքօ Փռօիօն ներս գա-
լով իստ սովորութեան Մուրատին անունները,
տարիքը ու ծնած քաղաքին անունը հարցուց .
Այս հարցմանց ատեն Մուրատ բարկութեամբ
մը ոտքի ելլելով .

— Ես Յովակիմ Նաբօլէօն Նաբօլի թագա-
ւորն եմ պատասխանեց, և կը հրամայեմ որ
դուրս ելլես : — Փռանչիքօն հնազանդեցաւ .

Մուրատ սեղանի մը առջև նստելով իր կրն-
կանը սա նամակը գրեց .

« Ամենաօրուն Քառօլինաս .

« Թշուառ ժամը հասաւ . տանջանաց վերջինս-
վըն ահա պիտի մեռնիմ, ժամէ մը ա՛լ ո՛չ դու ա-
մուսին պիտի ունենաս եւ ո՛չ ալ զաւկներնիս հայր
մը, միտքէդ մի հաներ զիս, միշտ նայէ որ յիշես :

« Արդար կը մեռնիմ ես, ու կեանքս անիրաւ
դատատանաւ մը ինձմէ կ'աւուրի կոր :

« Մնաս բարով Աշիւս, մնաս բարով Լեօթէթիաս,
մնաս բարով Լիւօիէնս, մնաս բարով Լուիդաս .

« Նայեցէք որ ինձի արժանի ըլլաք . ձեզի ա-
նանկ երկրի մը ու թագաւորութեան մը մէջ կը թո-
ղում որ իմ թշնամիներու լեցուն են, նայեցէք որ
թշուառութեանց յաղթէք . երբէք անցեալը յիշե-
լով չի հպարտանաք ու ինքզինքնիդ մեծ համարէք .

« Մնաք բարով, օրհնութիւնս կուսամ ձեզ .
չըլլայ որ իմ յիշատակս անիծէք : Գիտցէք որ քա-
շած տառապանքներուս ու ցաւերուս ամենէն մեծը
իմ զաւկներէս իմ կնիկէս հեռու մեռնելս է, ու քո-
վըս աշուքներս, գոցող բարեկամ մը չունենալս է .

« Մնաս բարով, Քառօլինաս, մնաք բարով զա-
ւակունքս, ընդունեցէք իմ հայրական օրհնութիւնս,
իմ քաղցր արտասուքս եւ իմ վերջին համբոյրս .

« Մնաք բարով, մնաք բարով, մի մոռնաք
ձեր դժբաղդ հայրը .

« Բիձձօ, 19 հոկտեմբեր 1815 .

« ՅՈՎԱԿԻՄ ՄՈՒՐԱՏ . »

— Այս նամակը դրելէ վերջը գլխէն մէկ քանի
մազ կտրեց մէջը դրաւ . Այս միջոցիս Նունձի-
անթէն ներս մտաւ . Մուրատ անոր գնաց ու
ձեռքը երկնցնելով, — Չօրապետ ըսաւ, դու
ալ զաւակաց ու ամուսնեոյ տէր ես, դու ալ
գուցէ օր մը պիտի հասկնաս թէ ի՛նչ է կնիկէ
մը ու զաւկներէ բաժնուիլը, երգում ըրէ որ
այս նամակը իր տեղը պիտի հասցունես .

— Պատուոյս և աստիճանիս վրայ, ըսաւ զօ-
րապետը աշուքները սրբելով .

— Միրող ամուր բռնէ զօրապետ, ըսաւ Մուրատ . մենք զօրական ենք ու գիտենք թէ մահն ի՛նչ է . Գեղի մէկ խնդիրք մը պիտի ընեմ, թող տուր որ ես հրաման ընեմ զինուորներուն վրաս կրակ ընելու ատեննին . Զօրապետը գլխովք հաւանութիւն տուաւ . Այս միջոցիս Փրանչիսքոն արքային վճիռը ձեռքը բռնած ներս մտաւ . Մուրատ հասկցաւ , — Կարդա պարոն , ըսաւ պաղարունութեամբ մը , կարդա ականջս քեզ է . Փրանչիսքոն հնազանդեցաւ ու կարդաց , Մուրատ չէր սխալէր , մէկ հոգիէ զատ՝ մնացեալ յանձնաժողովոյ բոլոր անդամներն ալ մահուան վճիռ էին տուեր .

Վճիռը կարդացուելէն ետքը՝ արքան դէպ ՚ի Նունցիանթէ զօրապետին դառնալով , — Զօրապետ , ըսաւ , չէի կարծեր որ Ֆէռտինանտոն շան մը պէս զիս հրացանի բռնել պիտի տայ . Ժամը քանի՞ն որոշած էք իմ մահս .

— Դուք որոշեցէք տէր , ըսաւ Զօրապետը .

Մուրատ կուրծքէն ժամացոյցը դուրս քաշեց , ասոր վրայ իր կնիսնը պատկերը շինուած ըլլալով՝ աչացը տանելով քսելէն ետքը , զօրապետին ցրցուց .

— Տես զօրապետ ըսաւ , թագուհւոյն պատկերն է , միթէ չի՞ նմանիր ըսէ . զօրապետը աչքը անդին դարձուց . Մուրատ հառաչանք մը արձկեց ու նորէն կուրծքը դրաւ .

— Ուրեմն Տէր , ըսաւ Փրանչիսքոն , ժամը քանի՞ն կորոշէք .

— Ա՛հ , ըսաւ Մուրատ . արդարեւ մտացայ երբոր Բաուօլինի պատկերը տեսայ նէ՛ թէ ինչու համար ժամացոյցս կուրծքէս հանեցի , — ու նորէն ժամացոյցը նայելով , — Ուրեմն ժամը չօրսին եթէ կը հաճիք . հիմայ ժամը երեքը անցեր է , յիսուն րոպէի չափ ատեն է ուղածս , միթէ շա՞տ է պարոն .

Փրանչիսքոն գլուխը ծռեց ու դուրս ելաւ . զօրապետն ալ անոր ետեւէն երթալ ուզեց .

— Ալ ձեզ չի՞ պիտի տեսնեմ Նունցիանթէ , ըսաւ Մուրատ .

— Ինձի հրաման եղած է որ մահուան ատեննիդ ներկայ ըլլամ , բայց կարծեմ որ այն սիրտը չի պիտի ունենամ .

— Շատ լաւ զօրապետ , շատ լաւ , կը թողում որ այն յետին ժամուն ներկայ չըլլաս , բայց կը բազմամ որ անգամ մ՛ալ մնաս բարով ըսեմ ու գրկեմ քեզ .

— Ծամբուն վրայ կը գրկես ինձ Տէր .
— Ենորհակալ եմ , հիմայ քիչ մը մինակ ձրգէ զիս .

— Տէր , երկու քահանայ կայ հոս . . . Մուրատ անհամբերութեան նշան մը յայտնեց . — Կուզէ՞ք որ ներս ղրկեմ .

— Այո՛ , ղրկէ .

Զօրապետը դուրս ելաւ . Վայրկեանէ մը քահանաները ներս եկան , մէկուն անունը Տօն Փրանչիսքօ Բէլէկոնինօ էր , ասոր մօրեղբայրն էր որ արքային մահուան պատճառ էր եղեր , միւսին անունն ալ Տօն Անթօնիօ Մաստէա էր .

— Ինչո՞ւ էք եկեր հոս , ըսաւ իրենց Մուրատ .

— Ձեզի հարցնելու համար թէ արդեօք բրիտանէաբար մեռնիլ կուզէ՞ք .

— Ես զինուորաբար պիտի մեռնիմ , դուրս ելիք .

Տօն Փրանչիսքօ Բէլէկոնինօն դուրս ելաւ . սակայն Անթօնիօ Մաստէան կայնած տեղէն չի շարժեցաւ .

— Չի լսեցի՞ր , ըսաւ Մուրատ .

— Այո՛ , պատասխանեց Տէրը , բայց թողութիւն կրնէք տէր , չեմ յուսար որ ձեր խօսքը վերջին խօսքերնիդ է . Առաջին անգամը չէ որ դձեղ կը տեսնեմ ու Ձեզի կը պաղատիմ , արդէն ձեզնէ շորհ մը խնդրած եմ .

— Ո՛րը .

— Երբ Ձեր Վեհափառութիւնը Բիճձօ եկաւ 1810 ին , իրմէն 25000 Ֆրանք խնդրեցի եկեղեցիսինս շինելու համար , Ձեր Վեհափառութիւնը անոր տեղ 40000 ղրկեց .

— Վասն զի առաջուց խելքս կտրեր էր որ հոն պիտի թաղուիմ , պատասխանեց Մուրատ ծիծաղելով .

— Ուրեմն տէր , կը յուսամ որ երկրորդ խրնդիրքս ալ չի պիտի մերժէք , ինչպէս որ առաջինը չի մերժեցիք . Տէր երեսանկեալ կաղաչեմ մի՛ մերժէք .

Ծերը Մուրատին ոտքն ինկաւ .

— Քրիստոնէաբար մեռէք տէր ըսաւ .

— Միթէ քեզ շատ հաճեցի՞ պիտի ըլլայ այնպէս ընեմ նէ՛ ըսաւ արքան .

— Տէր , մեռնելու քիչ ատենս մնացած է , անիկայ սիրով , կուտամ միայն թէ կուզեմ որ առանց խոստովանելու չի մեռնիք .

— Ուրեմն մտիկ ըրէ խոստովանանքս , ըսաւ Մուրատ . Երբոր տղայ էի ծնողացս անհնա-

զանդութիւն ըրի, քանի որ մեծցայ խիղճիս
զպչելու ամենեկին յանցանք մը չի գործեցի:

— Տէր, վիայագիր մը կուտամ որ քրիստոս
նէակսն կրօնքով է որ կը մեռնիք:

— Անշուշտ, ըսաւ Մուրատ ու գրիչ մը
առնելով գրեց:

« Ես Յովակիմ Մուրատ, կը մեռնիմ քրիս-
տոնէաբար, Կաթուղիկէ, Աւաքերական և
Հռովմէական Ս. Եկեղեցւոյ հաւատարմով, և
ստորագրեց:

— Հիմայ հայր իմ, շարունակեց, եթէ եր-
րորդ շնորհ մ'ալ խնդրելիք ունիք՝ շուտ ըրէք,
վասն զի կէս ժամէն ալ չէք կրնար խնդրել:

Քահանան ըսաւ որ չունի. — Ուրեմն մի-
նակ թողուցէք զիս ըսաւ Մուրատ: Ծերը դուրս
ելաւ:

Մուրատ մէկ քանի վայրկեան սենեկին մէջ
պտրտեցաւ, յետոյ անկողնոյն մէջ նստելով գը-
լուխը ձեռացը մէջ առաւ. երկար տխուր մը-
տածմունքներէ վերջը՝ գլուխը վեր վերցուց,
ճակատին գոյնը նետեր էր, բայց հանդարտ էր:
Ուրի ելաւ, գնաց հայելին առջև ու մազերը
շտկեց:

Ժամացոյցը չորս զարկաւ:

Մուրատ ինքնիրեն գնաց դուռը բացաւ.
Նուկնիանթէն դուրսը կապսէր:

— Ծնորհակալ եմ Զօրայեան, ըսաւ Մուրատ,
խօսքդ բռնեցիր. զիս գրիէ և անկից վերջը ուր
որ կ'ուզես գնա:

Զօրայեանը բազկացը մէջ ինկաւ լալով ու
առանց խօսք մը բերնէն հանելու կարող ըլլա-
լով:

— Միրուդ ամուր բռնէ՛ ըսաւ Մուրատ, չե՞ս
տեսներ որ ես հանդարտ եմ:

Զօրայեանը խեւի մը պէս դուրս ելաւ ու
անկայտ եղաւ:

Այն ատեն թագաւորը բակը իջաւ, ամեն
պատրաստութիւն արդէն եղեր էր ինը զինուոր
և մէկ անասնապետ մը ժողովոյ սենեկին դրանը
գէմը կարգաւ կանգնելու էին Մուրատ զնաց ա-
նոնց գէմը կայնեցաւ, ժամացոյցը հանեց, կրն-
կանը պատկերը համբուրեց ու անոր վրան նա-
յելով հրաման ըրաւ զօրաց հրացաններին պար-

պեն: Մուրատին կրակ պօռացած ատենը ինը
հոգիէն հինգը նետեցին: Մուրատ ուրի վերայ
մնաց. զօրքերը թագաւորի մը վրայ կրակ ընե-
լը ամօթ սեպելով գլխուն վրայէն նշան սուեր
էին: Հրացաններուն պարպուած ատենը Մու-
րատ առիւծի պէս անվեհեր կեցեր էր, երեսին
գոյնը ինչ որ էր առաջ նոյնը մնացեր էր, մար-
մնոյն մկուկքը բնաւ ուժէ չէին ընկած:

— Ծնորհակալ եմ, բարեկամք, ըսաւ զօրաց
դառնալով, բայց ըստ որում դուք ուզէք չու-
զէք դարձեալ պիտի մեռնիմ, նայեցէք որ
առանց երկարելու պաշտօննիդ կատարէք: Չեզ-
նէ այն կը խնդրեմ որ ուղղակի սրտիս վրայ
քաշէք ու զէմն խնայէք: Նորէն սկսեցք:

Եւ մի և նոյն ձայնով, մի և նոյն հանդար-
տութեամբ ու դէմքով կրակ ընելու հրամանը
նորէն տուաւ, բայց այս անգամ կը բառը
արտասանածին պէս՝ ութ տեղէ զարնուած ա-
ռանց շարժում մը ընելու հառաչանք մը ար-
ձրկելու և ժամացոյցը ձեռքէն ձգելու գետինն
ինկաւ:

Նոյն իրիկունը մարդուն մէկը բանտին հրա-
մանատարի հրամանաւր Մուրատին դիակը պահ-
ուած տեղը մտաւ ու տասը վայրկեան ետքը
ձեռքը արևնաթաթախ թաշկինակով մը դուրս
ելաւ: Այս մարդը Մուրատին գլուխը կտրեր
տարեր էր: Ֆեռտինանտոյի մահուան ատեն
այն գլուխը ցքի մէջ պահուած անոր պառկած
սենեկին մէջէն գտնուեցաւ

ԱՂԷՔՍԱՆԻՐ ՏԻԻՄԱՅ

Վ. Ե. Գ.

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ՌՈՒԲԵՆԻ Յ. ՔԻԻՐԲՃԵԱՆ

Կ.ՊՈԼԻՍ, ՖԻՆԱՆՍԱԿԱՆԱՐ